ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Երևան 22 հուլիսի 2026 թվական

ՆԻՍՏԸ ՎԱՐԵՑ՝

Համբարձում Մաթևոսյան	Շրջակա միջավայրի նախարար/ խորհրդի նախագահ

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Ա. Մկրտչյան	Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ,
Է. Աղախանյան	կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդական,
Հ. Մաթևոսյան	Շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության պետի տեղակալ,
Ա. Հակոբյան	Շրջակա միջավայրի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ-նախարարի մամուլի քարտուղար,
Ռ. Հարությունյան	Շրջակա միջավայրի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ/խորհրդի քարտուղար,
Լ. Միդոյան	COP17 «Կանաչ գոտու» համակարգող,
Ա. Ավագյան	«Տեխնիկական համագործակցության և զարգացման գործակալության հայաստանյան մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանում ոչ առևտրային կազմակերպության ներկայացուցիչ,
Ա. Հովսեփյան	«Ազգային ջրային համագործակցություն» գիտական, էկոլոգիական հասարակական կազմակերպության նախագահ,
Գ. Մնացականյան	«Սևան» երիտասարդական ակումբ» հասարակական կազմակերպության նախագահ,
Հ. Երանոսյան	«Կարոտա» մշակութային կրթական զարգացման հասարակական կազմակերպության քարտուղար,
Հ. Մինասյան	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ,

Լ. Ադամյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության գործադիր տնօրեն,
Լ. Հայրապետյան	Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի ներկայացուցիչ,
Լ. Մանուչարյան	Կլիմայի փոփոխության և կայունության զարգացման ավագ խորհրդատու,
Լ. Փաշինյան	«Յուլի-Դալի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն,
Մ. Մխիթարյան	«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչ,
Մ. Ստեփանյան	«Կանայք հանուն բնության» հասարակական կազմակերպության նախագահ,
Մ. Տաշչյան	բնապահպանական ոլորտի անկախ լրագրող,
Ն. Հարությունյան	բնապահպանական ոլորտի փորձագետ,
Ռ. Խաչատրյան	Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի գործադիր տնօրեն,
Ս. Հարությունյան	«Աժդահակ» սոցիալ-բնապահպանական կենտրոնի ներկայացուցիչ,
Վ. Ջհանյան	«Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ,
Ք. Տեր-Մաթևոսյան	«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության ներկայացուցիչ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. <u>Բացման խոսք, օրակարգի հաստատում</u>

ներկայացնող՝ շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթևոսյան/խորհրդի նախագահ,

2. <u>ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովի (COP17)՝ նախապատրաստական աշխատանքների ներկայացում</u>

ներկայացնող՝ շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթևոսյան/խորհրդի նախագահ,

3. <u>Մարդ-վայրի բնություն կոնֆլիկտի վերաբերյալ զեկույց</u>

ներկայացնող՝ բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության պետի տեղակալ Հակոբ Մաթևոսյան:

1. **Բացման խոսք, օրակարգի հաստատում**

Նախարարը ողջունեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց գործընկերներին նիստին մասնակցելու համար: Մինչ օրակարգային հարցերին անցնելը, նա առաջարկեց նիստը չհեռարձակել ուղիղ եթերով՝ հաշվի առնելով, որ նիստի առանձին հատվածները կանցկացվեն դռնփակ:

2. ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովի (COP17)՝ նախապատրաստական աշխատանքների ներկայացում

Նախարարը ներկայացրեց COP17 համաժողովի նախապատրաստական աշխատանքների ընթացքը, Հայաստանի՝ որպես նախագահող երկրի առաջնահերթությունները, ինչպես նաև այն հիմնական ուղղությունները, որոնց շրջանակում իրականացվում են կազմակերպչական և բովանդակային աշխատանքները:

Անդրադառնալով COP17-ի պաշտոնական կայքերին և սոցիալական մեդիայի հարթակներին՝ նախարարը նշեց, որ համաժողովի հաղորդակցության և հանրային իրազեկման արշավն արդեն մեկնարկել է: Նա կարևորեց կենսաբազմազանության, կլիմայի փոփոխության և անապատացման դեմ պայքարի վերաբերյալ Ռիոյի երեք կոնվենցիաների միջև սիներգիայի ամրապնդումը, ներկայացրեց Կունմինգ–Մոնրեալի կենսաբազմազանության գլոբալ շրջանակի հիմնական թիրախները, ինչպես նաև անդրադարձավ «Կանաչ գոտու» տաղավարներին և դրանցում նախատեսվող միջոցառումներին:

Վ. Ձհանյանը հետաքրքրվեց, թե Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ներկայացուցիչները մասնակցության ինչպիսի հնարավորություններ և ձևաչափեր կարող են ունենալ COP17-ի շրջանակում: Ի պատասխան՝ նախարարը հանձնարարեց Մկրտչյանին համակարգել հարցը և հստակեցնել ոլորտի ներկայացուցիչների մասնակցության հնարավոր ձևաչափերը:

Քննարկման ընթացքում բարձրացվեցին նաև COP17-ի կազմակերպչական գործընթացներին, խորհրդի անդամների ներգրավվածությանը և համագործակցության հնարավոր ձևաչափերին վերաբերող մի շարք հարցեր ու առաջարկություններ:

Նախարարն առաջարկեց առաջիկայում խորհրդի անդամների համար կազմակերպել շրջայց «Մերիդիան» էքսպո կենտրոնում, որտեղ անցկացվելու է COP17 համաժողովը՝ հնարավորություն ընձեռելով նրանց տեղում ծանոթանալու նախապատրաստական աշխատանքների ընթացքին և ստեղծվող ենթակառուցվածքներին:

3. Մարդ-վայրի բնություն կոնֆլիկտի վերաբերյալ զեկույց

Օրակարգային հաջորդ հարցի շուրջ բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության պետի տեղակալ **Հ. Մաթևոսյանը** նշեց, որ մարդ–վայրի բնություն կոնֆլիկտային դեպքերը գտնվում են նախարարության անմիջական ուշադրության կենտրոնում: Նա մասնավորապես անդրադարձավ Վայոց ձորի մարզի Շատին բնակավայրում մայր արջի և քոթոթի ներկայության, ինչպես նաև Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանում գայլերի հարձակումների վերաբերյալ ստացված ահազանգերին:

Հ. Մաթևոսյանի խոսքով, խնդիրը բազմագործոն է և պահանջում է հավասարակշռված մոտեցում՝ միաժամանակ ապահովելով բնակչության անվտանգությունը, պաշտպանելով համայնքների սոցիալ-տնտեսական շահերը և պահպանելով վայրի կենդանական աշխարհը:

Նա տեղեկացրեց, որ գործում է համապատասխան աշխատանքային խումբ, որի շրջանակում արձանագրված դեպքերը քննարկվում են իրավասու պետական մարմինների, գիտական և մասնագիտական կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ արդյունավետ և երկարաժամկետ լուծումներ մշակելու նպատակով:

Ընդգծվեց, որ միջազգային փորձը ցույց է տալիս՝ նման մարտահրավերների բախվում են նաև այն երկրները, որտեղ պահպանական միջոցառումների շնորհիվ վերականգնվում են վայրի կենդանիների առանձին տեսակների պոպուլյացիաները: Այս համատեքստում կարևորվեցին կանխարգելիչ միջոցառումների իրականացումը, այդ թվում՝ թափոնների պատշաճ կառավարումը, վայրի կենդանիների կերակրման բացառումը, էլեկտրական ցանկապատերի կիրառումը, բնակչության իրազեկվածության բարձրացումը, ինչպես նաև մշտադիտարկման ու արագ արձագանքման մեխանիզմների կատարելագործումը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Արձանագրեց՝ Ռ. Հարությունյանը